

## ՄԳՊԿ վիճակի համալիր ախտորոշում և բնական գազի պահեստավորման հասանելի ծավալների վերականգնում

Հայաստանի Հանրապետությունում կառուցված ստորգետնյա գազապահեստ կայանը (ՄԳՊԿ) ընդհանուր առմամբ հնարավորություն է տալիս առանց լուրջ հետևանքների հաղթահարել ճգնաժամերը՝ կապված մայրուղային գազամուղների վրա տեղի ունեցող վթարների կամ հանրապետություն բնական գազի մատակարարման սահմանափակումների հետ:

Վերջին 15 տարիների ընթացքում ՄԳՊԿ-ի տեխնիկական վիճակը զգալիորեն վատթարացել է, քանի որ աղաջրի հիմնական սպառող հանդիսացող «Նաիրիտ» գործարանը փաստացի դադարել է գործարկումը: Աղաջրի հեռացման անհնարինիությունը կտրուկ սահմանափակել է գազահորերում վերանորոգման և վերականգնման աշխատանքների իրականացումը, որի հետևանքով էլ վատթարացել են ստորգետնյա հորերի տեխնիկական բոլոր չափորոշիչները:

Վերջին տարիներին «Պողոսյանգազպրոմ» ԲԲԸ ակտիվ մասնակցությամբ մեծածավալ աշխատանքներ են իրականացվել գազահորերի ախտորոշման և վերանորոգման ուղղությամբ: Բացի այդ «ՀայՌուսգազարդ» ընկերությունը ձեռնարկել է աղաջրի պահեստարանի կառուցման շինարարությունը Ջովունի գյուղի տարածքում: Նշված միջոցառումները հնարավորություն են ստեղծել ՄԳՊԿ-ի պահեստավորման փաստացի ծավալները հասցնել մինչև 100 մլն խ/մ, և հուսադրող հիմքեր կան, որ բնական գազի պահեստավորման ծավալները առաջիկա երկու տարվա ընթացքում կհասցվեն մինչև 145-150 մլն խ/մ-ի: Ընդհանուր առմամբ ՄԳՊԿ-ի վերակառուցումը պահանջում է մեծ կապիտալ ներդրումներ: ՄԳՊԿ-ի զարգացման բիզնես պլանի համաձայն պահանջվող ներդրումները գերազանցում են 25 մլն ԱՄՆ դոլարը. ընդ որում վերը նշված ծավալներն ապահովելու համար անհրաժեշտ է 5 մլն ԱՄՆ դոլար, մինչև 200-220 մլն խ/մ ընդլայնելու դեպքում՝ անհրաժեշտ է 7-10 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար, կոմպրեսորային կայանի ֆիզիկական մաշվածությունը վերափոխելու համար՝ 12-13 մլն ԱՄՆ դոլար: